

ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿԻ  
(Ռուս բանաստեղծ)

ՀԱՅԱՍՏԱՆ

Ինչպէս անյայտ կնոջ դէմ, խորհրդաւոր ու անրիծ,  
Քո դէմ կանգնել եմ բախտի սարսուռով մի առանձին,  
Եւ վախենում է պոկուել առաջին բառն իմ շուրթից,  
Եւ աչքերս են շուարում թախանձանքով առաջին:  
Քեզ ճանաչել, հասկանալ ու գրկել եմ ուզում ես,  
Ուզում եմ, որ իրար դէմ բացուեն դռները ոսկի,  
Ո՛վ Հայաստան, արիւնով, կըրակով ես տանջում էեզ,  
Ես ուզում եմ սիրել էեզ ու խորհուրդդ էն խօսքի:  
Իմ գլուխն եմ խոնարհում էն հինաւուրց փառքի դէմ,  
Համբուրում եմ ես սրտանց գեղեցկութիւնը էն հին:  
Տարօրինակ է, որ էեզ մինչեւ հիմա չգիտեմ,  
Ալմաստերկիր, քարերկիր, երազերկիր դուն անգին,  
Ես դէպի էեզ եմ թռչում, պարզած թելերն իմ ազատ,  
Ահա վառում են իմ դէմ էն թագերը գեղեցիկ-  
Աղամանդէ, ալմաստէ էն աստղերը սրբազան:  
Ու ես թռչում եմ դէպի գագաթները նըրանց ձիգ:  
Քեզ ճանաչել, հասկանալ ու գրկել եմ ուզում ես,  
Սրտով լսել եմ ուզում համբաւը էն յարութեան,  
Ո՛վ Հայաստան, արիւնով, կըրակով ես տանջում էեզ,  
Ճակատագրի հողմի դէմ անպարտելի յաւիտեան:

Թարգմ. Համօ Սահեանի